ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___»«_____»2024թ. **N-------Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 684-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի «Երևան քաղաքում Բուժաշխատողների փողոց անվանակոչելու մասին» N604-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 17-րդ փողոցը և նրբանցքն անվանակոչել «Բուժաշխատողների փողոց» և «Բուժաշխատողների փողոց, 1-ին նրբանցք:»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 684-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի «Երևան քաղաքում Բուժաշխատողների փողոց անվանակոչելու մասին» N 684-Ն որոշմամբ Նորքի 17-րդ փողոցն անվանակոչվել է Բուժաշխատողների փողոց: Նորքի 17-րդ փողոցն ունի նաև նրբանցք, սակայն որոշման մեջ չի նշվել, որը հասցեավորման ընթացքում առաջացնում է որոշակի խնդիրներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 20-ի N 684-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն, որով Նորքի 17-րդ փողոցի նրբանցքը կանվանակոչվի «Բուժաշխատողների փողոց, 1-ին նրբանցք»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ